Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի

« 07» դեկտեմբերի 2020 թ., թիվ 148 նիստում

ՀՀ ԳԿՄԿ տնօրեն

---------- Ա.Սարգսյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԱՍԻ

2019/20 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան – 2020 թ.

2019-20 թթ. ուսումնամեթոդական մասն իրականացրել է հետևյալ աշխատանքները.

1. Կրթական ծրագրեր և Բենչմարքինգ

- ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրայում կազմակերպվել է առկա ուսուցմամբ՝ 9 և հեռակա ուսուցմամբ՝ 9 մագիստրոսական ծրագրեր: Շարունակվել են գործընթացները դասընթացների և կրթական ծրագրերի գնահատման առցանց համակարգի գործադրման ուղղությամբ:
- 2019/2020 ուսումնական տարում լրամշակվել և հաստատվել է մագիստրոսական 3 նոր կրթական ծրագիր: 2019-2020 ուստարում մեկնարկել են՝ 1.Երկրաբանություն, 2. Մոլեկուլային և բջջային կենսաբանություն,3. Շուկայագիտություն (Մարքեթինգ) մագիստրոսական կրթական ծրագրերը, ինչպես նաև լրամշակվել և ՀՀ ԿԳՄՄՆ է ներկայացվել և հաստատվել Կառավարում՝ «Գործարար վարչարարություն» ծրագրով հեռավար կրթություն իրականացնելու իրավունքը:
- 2019 թվականից անցում կատարվեց դեպի վերջնարդյունքահեն կրթական ծրագրերի մշակմանն ու ներդրմանը: Կենտրոնի բոլոր ամբիոնները վերանայեցին և բարելավեցին համապատասխան ՄԿԾ-երը, այդ թվում՝ ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները /*Հիմք՝* ուսմասում ամբիոնների տրամադրած փաթեթները/:
- Յուրաքանչյուր կրթական ծրագրի համար նորացվել են կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը և դասընթացների տեղեկագիրքը, որը ներառում է կրթական ծրագրի մասնագիրը և համապատասխան մոդուլ/դասընթացների մանրամասն նկարագրերը: Զգալի աշխատանքներ են տարվել ՄԿԾ-երի մասնագրերում և առարկայական նկարագրերում ակնկալվող ուսումնառության արդյունքների և պետական կրթական չափորոշիչների ու Որակավորումների ազգային շրջանակի հետ համադրելիությունն ապահովելու ուղղությամբ, որի արդյունքում ՄԿԾ-երի մասնագրերը համապատասխանեցվել են Որակավորումների ազգային շրջանակի հետ: /*Հիմք՝* ամբիոնների կողմից իրականացված մասնագիտության կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծությունները/:
- ԳԿՄԿ բոլոր ամբիոնները պարբերաբար իրականացրել և իրականացնում են մասնագիտական կրթական ծրագրերի բենչմարքինգ հայաստանյան և արտերկրի լավագույն փորձի ուսումնասիրման նպատակով: /*Հիմք՝* ամբիոնների բենչմարքինգի փաթեթները 4 ՄԿԾ-ի օրինակով /:
- Մշակվել է կրթական ծրագրերի և այլ գործընթացների բենչմարքինգի քաղաքականություն և ընթացակարգ՝ լիարժեք օգտագործելու միջազգային առաջատար փորձը Կենտրոնի ծրագրերը համադրելի դարձնելու արտասահմանյան համալսարաններում իրականացվող համանման ծրագրերի հետ

/*Հիմք՝* «ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի բենչմարքինգի (Համեմատական վերլուծության) քաղաքականությունը»:

- Համաձայն Բարելավման պլանի՝ մասնագիտական ամբիոններում ձևավորվել են ՄԿԾ-երի բենչմարքինգի իրականացման խմբեր /հր. N 84-Կ, 01 ապրիլի, 2017 թ.// 2021 թ.խմբերի նորացման աշխատանքները ընթացքի մեջ են/: 2019-20թթ. Բնապահպանություն և բնօգտագործում, Տնտեսագիտություն և կառավարում, Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա, Արևելագիտություն ամբիոններում մագիստրոսական կրթական ծրագրերը ենթարկվել են բենչմարքինգի, որը շարունակական գործընթաց է և Կենտրոնի ուսումնական մասը հատուկ ուշադրություն է դարձնում հետագա աշխատանքների բարելավմանը:
- Մասնակցություն ԳԿՄԿ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության կազմման աշխատանքներին՝ մասնավորապես III չափանիշ /Մասնագիտական կրթական ծրագրեր/, ինչպես նաև հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման պլան-ժամանակացույցի նախագծի մշակմանը:
- Կազմակերպվել է ԳԿՄԿ- ում ԱԱՀ-ների աշխատանքները:
- Կազմակերպվել և իրականացվել է ելքային արդյունքների վերահսկման ընթացքը: Ամփոփվել, այնուհետև ԿԳՄՄՆ են ներկայացվել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները:
- Ամփոփվել են ամբիոնների տարեկան հաշվետվությունները:
- 2020 թ. պատրաստվել և շրջանավարտներին են հանձնվել 359 դիպլոմ, որոնցից 116-ը՝ առկա ուսուցման համակարգում/14-ը՝ գերազանցության/, 243-ը՝ հեռակա /14-ը՝ գերազանցության/:
- Աշնանային և գարնանային կիսամյակներում ամփոփվել են ուսումն ընդհատած ուսանողների տվյալները:
- Շարունակվել են ուսանողական շարժի հաշվարկման և վերահսկման աշխատանքները: Ձևակերպվել են ՀՀ զինված ուժերում ծառայելու, ազատման, տեղափոխման, վերականգնման, արտերկիր գործուղման, հիվանդությունների պատճառով տարկետման, ինչպես նաև ուսումնական գործընթացին առնչվող այլ հրամաններ:
- Կորոնավիրուսային համավարակով պայմանավորված՝ 2020 թվականի մարտից Կենտրոնում անցում կատարվեց առցանց ուսուցման, բոլոր ամբիոնները ապահովվեցին համապատասխան ուղեցույցներով /*հիմք՝* «Ուսանողական էլ.փոստ մուտք գործելու ուղեցույց», «Մուդլ» հեռավար հարթակ. դասախոսների և ուսանողների ուղեցույց/:

2. Հաշվետու ժամանակաշրջանում կատարվել են մոնիթորինգի անցկացման համար նախապատրաստական աշխատանքներ և տրվել է գործընթացի մեկնարկը՝ «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգ» -ի համաձայն:

- ՄԿԾ-երի վերանայման գործընթացը կազմակերպելու և համակարգելու համար ՈՒՄՄ-ի կողմից Կենտրոնում մշտապես իրականացվել է ՄԿԾ մշտադիտարկում: /Հիմք՝ «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի

/մշտադիտարկման/ և պարբերական վերանայման կարգը» նոր խմբագրությամբ/

- ❖ Ներքին և արտաքին շահակիցների մասնակցությամբ՝ ըստ ամբիոնների/ըստ ՄԿԾ-երի/ 2019 թվականից ձևավորվել են մոնիթորինգի խմբեր:
- ❖ Նախատեսված մոնիթորինգի շրջանակներում Կենտրոնի ՈԱ բաժնի կողմից 02.03.2020-03.03.2020 թթ. կազմակերպվեց մոնիթորինգային խմբերի վերապատրաստում՝«Մոնիթորինգը որպես որակի ապահովման մեխանիզմ» թեմայի շրջանակներում
- ❖ Լրամշակվել է կրթական ծրագրերի մոնիթորինգի պլան-ձևաչափը,

ըստ որի՝ամբիոնն իրեն վերապահված գործառույթներն իրականացնելիս պետք է ունենա նշված պլան-ձևաչափում նշված բոլոր փաստաթղթերը

- ❖ Կենտրոնում գործող 13 ամբիոնների 21 կրթական ծրագրերով/առկա, հեռակա ուսուցմամբ/ իրականացվել է մասնագիտական կրթական ծրագրերի փաստաթղթերի նոր փաթեթների պատրաստման աշխատանքները: Փաթեթը ներառում է 16 փաստաթուղթ: /*Հիմք՝* ուսումնամեթոդական մասի շրջաբերականներ, ամբիոնների տեղեկատվական բազայի առկայություն/
- ❖ ԳԿՄԿ ուումնամեթոդական մասում մշակվել են համապատասխան ձևաթղթերը և բաշխիչ նյութերի հետ տրամադրվել բոլոր ամբիոններին, ուսումնամեթոդական մասի կողմից նաև մշտական խորհրդատվություն է տրամադրվել գործընկերներին

  /*Հիմք՝* ԳԿՄԿ ուսմասի նիստի արձանագրությունը և համապատասխան փաստաթղթերի փաթեթները /

Այս նպատակի իրականացմանն ուղղված՝

- ❖ շարունակվել են դասավանդման, ուսումնառության և գնահատման բարելավմանը միտված գործընթացները: Մասնավորապես՝ իրականացվել են ՊԴ կազմի վերապատրաստումներ ERASMUS+ ծրագրի շրջանակներում :

Մշտադիտարկման և արդյունքների վերլուծությամբ պայմանավորված մագիստրոսական ծրագրերում կատարված են հետևյալ փոփոխությունները՝

- ❖ Մշակված են Կենտրոնում գործող մագիստրոսական կրթության բոլոր մասնագիտացումների առարկայական ծրագրերն ու նկարագրերը

/*Հիմք՝*բոլոր ամբիոնների փաթեթների առկայությունը/

- ❖ Մագիստրատուրայի ամբիոններում մասնագիտական կրթական ծրագրի/ծրագրերի/ առարկաների դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների հստակեցման նպատակով կազմվել են ձևաթղթեր.

ա/ Հավելված-1-յուրաքանչյուր դասընթացի համար

բ/Հավելված-2-ամբիոնի կրթական ծրագրի/ծրագրերի/ ելքային վերջնարդյունքների համար

Հիմք՝ ԳԿՄԿ բոլոր մասնագիտական ամբիոնների ամփոփ տեղեկատվությունը ուսմասում:

❖ Բոլոր ամբիոնների ուումնական պլաններում կատարվել են փոփոխություններ՝ կապված կրթական ծրագրերի բարելավման հետ
/Հիմք՝ ԳԿՄԿ բոլոր ամբիոնների գործունեությունը հավաստող ամբիոնային փաստաթղթերը-քաղվածքներ՝ ամբիոնի նիստերի արձանագրությունից/:

❖ Մի շարք մագիստրոսական ծրագրերում ներառվել են նոր դասընթացներ՝ հաշվի առնելով, որ գործնական ժամերին ձեռք բերված կարողությունները կնպաստեն մագիստրոսական թեզերի ինչպես տեսական վերլուծությունների որակի բարձրացմանը, այնպես էլ սովորողների վերլուծական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Չափելիության հետ առնչվող փոփոխություններ՝

❖ Ուսումնամեթոդական մասում մշակվել և 2019-20 ուստարվա ավարտին ներդրվել է մագիստրոսական թեզերի գնահատման նոր չափանիշներ, ավարտական գիտական թեզի արժևորման և գնահատման հատուկ ձևաչափ, որը ենթարկվում է անընդհատ բարելավման և ամբողջականացման, հաշվի առնելով թեզերի ղեկավարների, ամբիոնի վարիչների, մեթոդական խորհրդի առաջարկությունները, ինչպես նաև ավարտական ամփոփիչ հանձնաժողովի / ԱԱՀ-ի/ դիտողությունները:
/Հիմք՝Մագիստրոսական թեզի իրականացման և գնահատման կարգի լրամշակված տարբերակը:

❖ Մշակվել և ներկայացվել են ավարտաճառերի պաշտպանության երաշխավորման կարծիքի նոր ձևաչափեր/գրախոսական, ղեկավարի կարծիք// առկա են/:

❖ Ստեղծվել է մագիստրոսի կրթական ծրագրով իրականացվող հետազոտական աշխատանքների գիտական բաղադրիչը ապահովող փաստաթուղթ/ մագիստրոսական թեզի ղեկավարի կիսամյակային Հաշվետվությունը, /Հիմք՝ ամբիոններում առկա փաթեթը/, որի համաձայն՝

❖ որոշվել է մագիստրանտների հետազոտական աշխատանքների ատեստավորումն իրականացնել յուրաքանչյուր կիսամյակում՝ համաձայն վերոնշյալ հաշվետվության,

❖ Կրեդիտային համակարգով /առկա, հեռակա/ ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման լրամշակված Կարգերի համաձայն՝ կատարվել են գնահատման կարգի փոփոխություններ/Հիմք՝նշված կարգերը/

Համավարակով և պատերազմական գործողություններով պայմանավորված՝ մոնիթորինգի հետ կապված աշխատանքների զգալի մասը իրականացվել են հեռավար կարգով: Ամբիոնները մշտապես ապահովված են եղել համապատասխան մեթոդական խորհրդատվությամբ, անհրաժեշտ բաշխիչ նյութերով/լրացման ենթակա ձևաթղթեր, նմուշ-օրինակներ և այլն/:
Այդուհանդերձ, մոնիթորինգի անցկացման 1-ին փուլը իրականացվել է և կրում է շարունակական բնույթ:

Պրակտիկա

- ❖ Մագիստրատուրայում ուսանողների գիտահետազոտական, գիտամանկավարժական կամ մասնագիտական պրակտիկաները կրթական ծրագրերի պարտադիր մաս են կազմում : Դրանք իրականացվում են կոնկրետ մասնագիտական գործունեության ոլորտներում՝ պրակտիկան կազմակերպող հիմնարկի և Կենտրոնի կողմից նշանակված ղեկավարների հսկողության և անմիջական աջակցությամբ: Պրակտիկաները կազմակերպվում են Կենտրոնի և կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի/համաձայնագրերի/ հիման վրա:

Կարևորելով բուհ-գործատու կապի հետագա ամրապնդումը, գործատուների ներգրավվածությունը կրթական գործընթացներին և դրա արդյունքում ուսանողի գործնական հմտությունների զարգացումը՝ Կենտրոնի ուսումնամեթոդական մասում որոշվեց բարեփոխել ուսումնական պրակտիկաների կազմակերպման գործընթացը: Կազմվեցին և գիտխորհրդի հաստատմանը ներկայացվեցին գիտահետազոտական և գիտամանկավարժական պրակտիկաների նոր ծրագրերը; /*Հիմք՝* Մագիստրոսի կրթական ծրագրի մասնագիտությունների գիտահետազոտական պրակտիկայի ծրագիր, Մագիստրոսի կրթական ծրագրի մասնագիտությունների գիտամանկավարժական պրակտիկայի ծրագիր/

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են ուսումնական պրակտիկանե-ի կազմակերպման, ընտրված հաստատությունների ցանկի վերանայման աշխա-տանքները: Ուսումնական պլաններում նախատեսված պրակտիկաները իրակա-նացնելու համար Կենտրոնն ունի պայմանագրեր, որոնք կնքված են պետական և ոչ պետական տարբեր կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և նրանց ստորաբաժանումների հետ (ինչպիսիք են՝ ՀՀ նախագահի աշխատակազմը, ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ Սահմանադրական դատարանը, ՀՀ դատական դեպարտամենտը, նախարարությունները, դպրոցները, միջազգային կազմակերպությունների երևանյան ներկայացուցչությունները և այլն):

Մշակված փաստաթղթեր՝

- ➢ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում հեռավար ուսուցման ձևով ուսումնական գործ-ընթացի կազմակերպման կարգ
- ➢ ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի բենչմարքինգի (Համեմատական վերլուծության) քաղաքականությունը
- ➢ Մագիստրոսական կրթական ծրագրով մագիստրոսական թեզերի իրականացման և գնահատման կարգը
- ➢ Մագիստրոսի կրթական ծրագրի մասնագիտությունների գիտահետազոտական պրակտիկայի ծրագիր,
- ➢ Մագիստրոսի կրթական ծրագրի մասնագիտությունների գիտամանկավարժական պրակտիկայի ծրագիր

Հրամշակված փաստաթղթեր՝

- Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ
- Կրեդիտային համակարգով հեռակա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ
- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի /մշտադիտարկման/ և պարբերական վերանայման կարգը
- ԳԿՄԿ առարկայական նկարագրի մշակման ռազմավարությունը
- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթական ծրագրերի հաստատման /արտոնման/ կարգը
- ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ 2020-2021 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության կարգ

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ուսումնամեթոդական մասի պետ՝ Ե.Զարգարյան